

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՃՈՆԵՐԳԵՐԸ* (Համատեքստային քննական ակնարկ)

Բանալի բառեր - ժանր, տեքստ, համատեքստ, Գր. Արծրունի, Վ. Խան-դամիրյան, Մկրտիչ Խրիմյան, Օ. Գրուզենբերգ, Վրաստանի բանաստեղծներ, Վ. Բոյուտով, Նիմֆա Գորոդեցկի

Ճոներգը՝ իբրև քնարական ենթաժանր, ծագումնաբանորեն կապվում է հնագույն ներբողի հետ, որ, դարաշրջան առ դարաշրջան անընդհատ փոխելով իր բնույթն ու ձևը, այսօր գիտակցվում է որպես որոշակի անձի հասցեագրված, որևէ նշանակալից իրադարձության առիթով հորինված քնարական կամ քնարաեպիկական ստեղծագործություն:

Թումանյանի ճոներգերը հետաքրքրություն են ներկայացնում ամենից առաջ ընթացիկ իրականության, իր մերձավոր ու հեռավոր շրջապատի հետ նրա տարաբնույթ հարաբերությունների առումով, որ անմիջական ազդակ են ծառայել տարբեր ստեղծագործական մտահղացումների համար: Իսկ այդ մտահղացումները իրացման ընթացքում հաճախ հեռանում են իրենց գոյավորման որոշակի սկզբից՝ կապվելով կենսափիլիսոփայական ու գեղագիտական աշխարհայեցողության ավելի լայն շրջանակների հետ: Ուստի դրանց վերլուծական քննությունը բանաստեղծի ստեղծագործության համատեքստում անշուշտ օգտակար կարող է լինել այդ ստեղծագործության ինչ-ինչ կողմեր ավելի լավ հասկանալու ու մեկնաբանելու համար, մանավանդ որ ուսումնասիրողները բանաստեղծի այդ գործերին համարյա չեն անդրադարձել:

Բանահյուսական ծագումով ճոներգերը, որ միշտ էլ լայն տարածում են ունեցել ժողովրդի մեջ, Թումանյանին հետաքրքրել են վաղ պատանության տարիներից: «Շատ վաղ եմ սկսել ոտանավոր գրելը, մի առիթով հիշում է բանաստեղծը: 10-11 տարեկանս Լոռիս Մելիքո-

* Հոդվածն ընդունված է տպագրության 18.08.2020 թ.:

վի վրա երգեր էին երգում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և երգում էի զանազան ոտանավորներ՝ երգիծաբանական, հայրենասիրական և սիրային»:¹

Թումանյանի ինքնուրույն ձոներգերից մեզ հասած ամենավաղ օրինակը հայտնի «Հոգուս հատոր»-ն է՝ 12-ամյա պատանու զարմանալիորեն գիտակցված սիրո խոստովանություն:² Պարզ անմիջականությամբ, ուժեղ, կից հանգավորմամբ քառավանկ կարճ տողերով այս ոտանավորը, որ հետո պիտի դառնար Թումանյանի նախասիրած տաղաչափական ձևերից մեկը, հյուսված է բանաստեղծական արվեստի բոլոր կանոններով և, որ ամենակարևորն է, կրում է, հետագայում մի այլ առիթով բանաստեղծի արտահայտությամբ ասած՝ «ստեղծագործողի կենդանի շունչը, էն, որ ամենայն իրավամբ կոչվում է Աստվածային»:³ Պատահական չէ, որ վաղ պատանեկան տարիների իր ստեղծագործական փորձերից բանաստեղծի հիշողության մեջ մնացել է հենց այս մեկը:

80-ականների վերջերից, երբ բանաստեղծն արդեն թևակոխում էր իր նախասահմանված կոչումի գիտակցության շրջանը, նրա ձոներգերը գաղափարական հարստացմանը զուգընթաց հատկանշվում են մտահղացման ու կառուցվածքի բազմազանությամբ: Դրանք սովորաբար անվերնագիր են կամ կրում են արտաքինապես հասցեատիրոջ հետ կապ չունեցող խորագրեր. իսկությունը պարզվում

¹ Հովի, Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու՝ տասը հատորով (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 1, Երևան, 2018, էջ 596: Նույն նամակում հիշում է իր ավելացրած այդ տներից մեկը.

Ես Մելիքն եմ Լոռեցի,
Մուկտար փաշին գոռեցի,
Տարի՛-նանա՛, տարի՛-նանա՛,
Մելիք ջան,
Դոշունի սարդար Մելիք ջան...
Արփաչայի ծիլ-ծիլ խոտը
Կտրել է Մուկտարի հոտը,
Մելիք ջան,
Դոշունի սարդար Մելիք ջան...

² Թե ով է եղել ապագա մեծ բանաստեղծի սիրտը գրաված այդ բախտավոր պարմանուհին, ստույգ հայտնի չէ: Ժամանակակիցները հիշում են Ջալալօղլու դարոցի տնօրեն Տ. Տեր-Դավթյանի դստեր՝ Վերգինեի և համադասարանցի Քալի Շահվերդյանի կամ Սիմոնյանի անունները:

³ Հովի. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 26: Տարօրինակ է, որ անգամ Տ. Տեր-Դավթյանը՝ կրթված և բանիմաց մի անձնավորություն, ոչ միայն չի կռահել որ գործ ունի բացառիկ շնորհով օժտված մեկի հետ, այլև փորձել է իր սանին պատժել հանդուգն արարքի համար:

Ե բովանդակությունից՝ այլ տվյալների համադրությամբ, կամ ժամանակակիցների հուշերից: Դրանցից է, օրինակ, 1889-ին գրված «Ի՞նչ ես կատաղել անմեղ արարքից» սկզբնատողով ոտանավորը, որ, ինչպես ասել է 20-ամյա Թումանյանը իրեն մեծ բանաստեղծի ապագա գուշակող առաջիններից մեկին՝ Տիգրան Փիրումյանին, նվիրված է Գր. Արծրունուն և ուղղված է նրա հակառակորդների դեմ:¹

Հոգեբանական իրադրությունը ներկայացվում է այնպես, որ դրա կրողը ոչ թե հեղինակն է, ինչպես ընդունված է քնարական կառույցներում, այլ նա, ում ծնված է բանաստեղծությունը, այսինքն՝ Արծրունին ինքը: Բարձրացվում է գաղափարական ընտրյալ - ամբոխ հակադրության թեման, որ գալիս էր ընդհանուր ռոմանտիկական և մասնավորապես հայ 60-ականների դեռևս կենսունակ ավանդույթներից: Այնուամենայնիվ արդեն նշմարվում է բանաստեղծական կենսափոխակերպության այն երակը, որ ավարտուն աշխարհայացք պիտի դառնար վերջին տարիների խոհական երգերում ու քառյակներում: Դրա մասին է վկայում ծոներգի ավարտական քառատողը.

*Միամիտ ամբոխ, մոլորված ես դուն,
Ես անգիտությամբ կուռք չպաշտեցի,
Ես այն մարդու մեջ տեսա Աստրծուն,
Ահա թե ինչու երկրպագեցի:*

«Աստվածացյալ մարդու» այս իդեալը հետո պիտի դառնար Թումանյանի բանաստեղծական երևակայության ու ոգեշնչումի ակունքները սնուցող զարկերակներից մեկը:

Տիգրան Փիրումյանը վկայում է, որ Արծրունուն է նվիրված նաև «Մարգարե» բանաստեղծությունը՝ գրված 1890 թ. մայիսի 1-ին, նրա հրապարակախոսական գործունեության քսանամյակի առթիվ: Այստեղ ևս Արծրունու մասին ուղղակի ակնարկ չկա: «Հրաթափ լեզվով» հրապարակախոսի նրա կերպարը ուրվագծվում է աստվածաշնչյան մարգարեների հետ ենթատեքստային զուգադրությամբ:² Այդպես է

¹ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, լրամշակված վերահրատարակություն, հ. 1, 2019, էջ 339:

² Այս մասին հանգամանորեն տե՛ս բանաստեղծության ծանոթագրություններում (Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ.1, 2018, էջ 608-609):

Արծրունու և նրա գաղափարախոսության հանդեպ Թումանյանի վերաբերմունքը միանշանակ չի եղել ինչպես «Մշակի» հիմնադրի և երկարամյա խմբագրի կենդանության ժամանակ, այնպես էլ հետագայում: Դա ունեցել է իր ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառները: Հայտնի է, որ Արծրունին որպես սկզբունք «Մշակում» ոտանավորներ չէր տպագրում և խիստ քննադատաբար էր

իրերի դրվածքն աշխարհում, հուշում է բանաստեղծը. մարդկանց մոլորությունը ներող և նրանց «փրկության մասին մտաձոգ» լուսամիտ անհատները միշտ էլ ի տրիտուր վաստակում են «խավար ամբոխի» ապերախտությունը: Այս ամենի մեջ չի կարելի չտեսնել նաև ինքնակենսագրական պահ: Հոգևոր կոնսիստորիայում հոգեմաշ աշխատանքի տարիներն էին, երբ առաջին քայլերն անող բանաստեղծը ստիպված էր ամեն քայլափոխի կրել շահամոլ ու խավարամիտ միջավայրի թշնամանքի դառնությունը, որ արտահայտվել է այդ օրերին գրված երգիծական մի քանի ոտանավորներում, տարիներ անց՝ նաև «Պոետն ու Մուսան» պոեմում:

Թումանյանի ձոներգերը երբեմն կարևոր տեղեկություններ են պարունակում նրա նշանավոր ստեղծագործությունների մտահղացման վերաբերյալ: Անուշավան Աբովյանին նվիրված ձոնից, օրինակ, հետաքրքիր մանրամասներ ենք իմանում «Անուշ» պոեմի ստեղծագործական պատմության մասին:¹ Պարզվում է, որ պոեմի հիմքը կազմող կենսական իրականության շուրջ մտորումները վաղուց են զբաղեցրել նույն իրականության մեջ ծնված ու մեծացած երկու մտերիմ ընկերներին: Դա հստակ երևում է ձոնի հենց առաջին քառատողից.

*Սիրելի ընկեր, շատ ոգևորվել,
Շատ ես հառաչել դու նրա մասին,
Որ այսօր հոգուս թռիչք է տվել,
Որ այնտեղ երգեմ ես քո առաջին:*

տրամադրված հատկապես «Մուրճում» տպագրվող երիտասարդ բանաստեղծների հանդեպ: 1891 թ. «Մշակի» հմ. 90-ում տպագրվում է նրա հայտնի «Ֆելիետոնը», որտեղ ծաղրանքով է հիշվում նաև Թումանյանը: Արծրունու մահից հետո էլ «Մշակի» թշնամական պահվածքը բանաստեղծի հանդեպ դեռ երկար ժամանակ շարունակվում էր: Պատճառներից մեկն էլ թերևս դա էր, որ հետագայում Թումանյանը որոշակի վերապահումով էր մոտենում նրա անվան շուրջ ստեղծված ավանդական պատկերացումներին: Օրինակ՝ 1913 թ. դեկտեմբերի 26-ին ՀԳԿԸ 24-րդ երեկույթում, որ նվիրված էր Արծրունու, Թումանյանին իր ելույթն սկսում է այսպես. «Առհասարակ ինչպես շատ խնդիրների մասին, Էսպես էլ Արծրունու մասին մի անգամ արդեն հայտնված ու տարածված կարծիքն ընդունվում է ճիշտ և անվիճելի շատերի կողմից, որը առաջ է գալիս խնդրի ոչ հիմնավոր ուսումնասիրությունից» (տես՝ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, 1995, էջ 37-38): Բայց այդ օրերին Արծրունին երիտասարդության աչքին դեռ երևում էր մարգարեի լուսապսակով: Դրա վկայությունն է Թումանյանի «Մարգարե» բանաստեղծությունը:

1 Ձոնը գրված է 1891 թ. մարտի 2-ին ընկերոջն ուղղված նամակում: Այդտեղից էլ իմանում ենք, որ Թումանյանը նախապես մտադիր է եղել պոեմի առաջին տարբերակը նվիրել նրան, և նրա խորհրդով է, որ հրաժարվել է պոեմը «Մուրճում» տպագրելու մտքից, և այն առաջին անգամ լույս է տեսել «Բանաստեղծությունների» 2-րդ հատորում:

Այդ մեծ հառաչանքը, որ այսօր ընդունված բացատրությամբ՝ Թումանյանի ստեղծագործության «բանալի բառերից»¹ է և անգամ պիտի դառնար հայտնի պոեմի խորագիրը, նրա հոգում բնավորվել է այն օրերից, երբ դեռ նոր-նոր էր գիտակցում, որ աշխարհ է եկել այդ հառաչանքը ամենից խոր հառաչելու առաքելությամբ:

Ժամանակի հետ Թումանյանի ձոներգերի ենթատեքստը հարստանում է իմաստային նորանոր շերտերով, որ հնարավորություն է տալիս բանաստեղծի ստեղծագործական հասունացման ընթացքին հետևել նաև այս դիտակետից: Տարիներ անց՝ 1902 թ. օգոստոսի 10-ին իր մյուս մտերիմ ընկերոջը՝ Փիլիպոս Վարդագարյանին ուղղված նամակում պահպանվել է նրան ձոնված մի ոտանավոր՝ «Ընկերիս» վերնագրով: Այստեղ թումանյանական իդեալի հորիզոններն ընդարձակվում են, ձևավորվում է «Վեր»-ի գաղափարանիշը¹, որ պիտի դառնար նրա գեղարվեստական համակարգի հիմնախարիսխներից մեկը, եթե չասենք ամենագլխավորը: Այդ խորհրդանիշը հետագայում տարբեր համակարգիչ գործառնությունով պիտի հանդես գար քնարական շատ կառույցներում, ինչպես «Վայրէջք», «Մեր ուխտը», «Բարձրից», քառյակներ և այլն:

Փորձենք հետևել բանաստեղծական խոհերի ընթացքին: Առաջին քառատողը ներկայացնում է քնարական մտահղացման առկա նախադրյալը.

*Իմ վեհ տենչերի, չըքնաղ վըշտերի,
Վառ երազների մըտերիմ ընկեր,
Դու էլ ինձ նըման պանդուխտ ու գերի,
Անգուսպ կարոտով ծըգտում ես միշտ Վեր:*

Փ. Վարդագարյանը Թումանյանի «վեհ տենչերի, չըքնաղ վշտերի, վառ երազների» «մտերիմ ընկերն» էր ուղղակի իմաստով, որովհետև լինելով ջերմ գրասեր ու հոգով բանաստեղծ՝ ապրում էր նույն տենչերով, երազներով ու վշտերով: «Չքնաղ» վերադիրը շրջում է վշտերի առօրեական իմաստը՝ դրանց հաղորդելով նույն տենչերի այլազոյության նշանակություն: Պանդուխտության մասին ակնարկի իրական երեսը ամբողջովին բացվում է երկրորդ քառատողում.

Այնտե՛ղ, մեր հոգու սուրբ հայրենիքում,

1 Նամակում Թումանյանն այսպես է մեկնաբանում այդ գաղափարանիշը. «Գաղափարների ու երազների աշխարհն է, որ ես մի խոսքով անվանել եմ Վեր» (Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 9, էջ 297):

*Խաղաղ օրերի պայծառ լույսի տակ
Ապրում է սերը, ժրպիտը ծաղկում,
Ուրախ երգերը թընդում ներդաշնակ...*

«Հոգու հայրենիքի» գաղափարը, առաջին անգամ բառային ձևակերպում ստանալով այստեղ, հետագայում մեկ անգամ էլ, որ պիտի հանդիպեր Թումանյանի քնարական մտահղացումներում՝ ամեն անգամ նորովի իմաստավորվելով նոր համատեքստում, բայց նշանակությամբ մնալով նույնը: Հիշենք, օրինակ, «Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն...», «Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկուն...» քառյակները, «Բարձրից» բանաստեղծությունը, «Ոսկի քաղաքը» հեքիաթը և այլն: Իրական աշխարհում պանդուխտ լինելու իրողությունը անմիջականորեն կապվում է «հոգու հայրենիքի» հետ, որ դեռ հեռավոր երագ է.

*Բայց, ա՛խ, նա այնքան, այնքա՛ն է հեռու,
Ու՛ մինչև այնտեղ կը հասնենք մենք դեռ,
Այնքա՛ն ենք լալու, այնքա՛ն տանջվելու,
Իմ տանջանքների մըտերի՛մ ընկեր:*

Չի կարելի չհիշել աշխարհին ու մարդուն այնքան սիրահարված բանաստեղծի՝ հուսաբեկության պահերին հնչեցրած ծանրաթախիծ տողերը՝ «Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան...» կամ «Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...»:

«Հոգու հայրենիք» հասկացությունը սովորաբար նույնացվում է «Վայրենքից» հայտնի «Անհայտը սուրբ», «աշխարհքը պայծառ», այլ գործերում հանդիպող «Անհուն» արտահայտությունների հետ: Սակայն դրանք ուրվագծում են թումանյանական իդեալի տարբեր եզերքներ: Առաջինը ներկայացնում է յուրօրինակ սոցիալական ուստոպիա՝ կապված առարկայական աշխարհի հետ, մյուսները խորհրդանշում են մարդկային մտքի՝ գոյության առեղծվածը լուծելու հավերժորեն անհաս բաղձանքը, որ տանջալի թոփչք է տալիս բանաստեղծ հոգիներին: Այս տեսակետից բնորոշ օրինակ կարող են լինել բանաստեղծի երբեմնի մտերմուհի Վարյա Խանդամիրյանին¹ ձուլված «Դու քո ճամփեն գնա, քույրի՛կ...» բանաստեղծությունը, որ Թումանյանի քնարերգության ընտիր էջերից է: Այստեղ ուղղակի ակնարկներ կան բանաստեղծի հոգին ալեկոծող «անմեկին կարոտների» մասին.

¹ Վարյա Խանդամիրյանը հետո պիտի դառնար պատմաբան Հակոբ Մանանդյանի կինը:

*Ելած կյանքի ամեն ճամփից,
Կարոտներով անմեկին,
Ազահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին:*

*Մի ձեռք չըկա, մի գիրկ չըկա՝
Պահի նըրան իրեն մեջ,
Խենթ, խելագար գընում է նա
Ձըգտումներովն իր անվերջ:*

Այս բանաստեղծության մասին Թումանյանը Փ. Վարդագարյանին գրում է. «Այս այն բանաստեղծություններից է, որոնց մեկնությունը իրենցից շատ ու շատ է երկար, որոնք կենսագրություն ունեն, պատմություն ունեն իրենց ետևը: Այսպիսի ոտանավորների տողերում է, որ թաքնված է լինում բանաստեղծի հոգին»:¹ Ոտանավորը և այս տողերը գրելիս Թումանյանն արդեն երկու ժողովածուների հեղինակ էր, հրատարակել էր «Դաշնակների» երկու գրքերը, պատրաստում էր երրորդ՝ բեկումնային ժողովածուն, արդեն բավական լայն հասարակական ճանաչում ուներ: Ուրեմն ինչո՞ւ կարոտները դեռ «անմեկին» էին, ինչո՞ւ էր հոգին թափառական, ինչո՞ւ անվերջ «ձգտումների» հետևից նրա «խենթ, խելագար» թռիչքը չէր գտնում հանգստի հանգրվան: Վարյա Խանդավիրյանն անշուշտ ծանոթ է եղել իրեն ծնված ոտանավորին և հենց այսպիսի հարցեր է ուղղել բանաստեղծին, թե «բախտավոր» աստղի տակ ծնված լինելով՝ իզուր է դժգոհում իր ճակատագրից: Ըստ էության այդ հարցերի պատասխանն է նույն Խանդավիրյանին ծնված երկրորդ բանաստեղծությունը՝ «Պանդուխտ եմ, քույրի՛կ, մանուկ օրերից...»: Այդ մասին ուղղակի ակնարկ կա նաև ոտանավորում.

*Եվ դու հանդիպած իմ դըժար ճամփում,
Ատում ես՝ արդեն բախտավոր եմ ես,
Իզուր եմ փախչում, իզուր գանգատվում
Ու տանջվում այսպե՛ս...*

Բանաստեղծը անմիջապես հակադարձում է ու բավական կտրուկ.

¹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 9, Երևան, 1997, էջ 438: Ուսումնասիրողները այս բանաստեղծություններին անդրադառնալիս խոսում են առավելապես դրանց մտահղացման իրական-կենսագրական ազդակների մասին՝ միայն ընդհանուր դիտարկումներ անելով բանաստեղծի հոգու կենսագրության մասին:

*Ո՛ր դու միամիտ: Բայց երկինք վըկա,
Չեմ եղել երբեք ես այդքան ըստոր,
Որ կարենայի այս դաժան բանտում
Լինել բախտավոր:*

Ուսումնասիրողը այս քառատողը մեկնաբանում է այսպես. «Երազի և դաժան իրականության օրհասական մենամարտում ազատության մեծ իդեալի երդվյալ պաշտպանը Հեր կարող լինել «այնքան ստոր», որ «այս դաժան բանտում լինի բախտավոր»:¹ Այսպիսի մեկնաբանությունը, իհարկե, բոլորովին անհիմն չէ, եթե ընդունենք, որ բանաստեղծը, «դաժան բանտ» ասելով, նկատի ունի միայն ազգային կամ սոցիալական որոշակի իրականություն, ինչպես, ասենք, «Գութանի երգում»: Բայց դա ակնհայտորեն նեղացնում է հեղինակի ու նրա գրուցակցի երկխոսության իմաստը. «դաժան բանտի» մասին բանաստեղծի ակնարկը վերաբերում է աշխարհի կարգ ու սարքին ընդհանրապես: Այդ աշխարհի առարկայական պատկերը՝ իր բազմատեսակ դրսևորումներով թումանյանն արդեն ցույց էր տվել և դեռ էլի պիտի ցույց տար իր տարբեր ժանրի շատ գործերում: Բայց դա չէ, որ նա, ինչպես աշխարհի բոլոր մեծերը, համարում էր իր գլխավոր առաքելությունը: Այդ առաքելության խորհուրդը ինքն իր համար դեռ լիովին չէր պարզել և անհեթեթ աշխարհում պանդուխտ էր զգում իրեն.

*Պանդուխտ եմ, քույրի՛կ, մանուկ օրերից,
Գընում եմ դեպի մի անհայտ երկիր՝
Կըտրված կյանքի ամեն կապերից,
Մենակ, տարագիր:*

Պանդխտության ու մենակության զգացողությունը մեկ անգամ չէ, որ հուզում էր բանաստեղծի հոգին, ինչպես տեսանք նաև վերևում: «Հոգու հայրենիքի» որոնման ճանապարհին նա դեռ շատ հանգրվաններ պիտի փորձեր՝ մերթ տառապելով «հայոց վշտի մեծ ծովի մեջ», մերթ հառաչելով գրկվածի հառաչանքը, մերթ ընդվզելով «շահ ու գերու, ստրուկ ու տիրոջ» աշխարհի դեմ: Բայց այդ բոլորից հոգուն ծանրացած բեռը չի թեթևանում, մինչև որ իր քառասնամյակի բարձրությունից նշմարում է «հոգու խաղաղության» հանգրվանը («Վայրեջք»): Բայց «Անհայտը սուրբ, աշխարհըը պայծառ» դեռ մշու-

¹ Տե՛ս Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1988, էջ 524, «Թումանյանի քնարերգությունը» ներածական հոդվածը:

շոտ հեռավորություն է, որ տարիներ անց՝ 1917 թ., առարկայական իմաստ է ստանում դատեր՝ Արփենիկի այլոմում թողած մի «անմեղ» ոտանավորում.

*Նայի՛ր, նայի՛ր սըրտաբաց
Էս լեն արծակ աշխարհին
Առատ, առատ տարածված,
Գեղեցիկը ու բարին:*

*Էսքան, էսքան մոտ ու շատ
Բախտը փրոշված մեր կյանքում,
Մարդը, մարդը միշտ անբախտ
Որոնում է երկնքում:*

Այստեղ են միավորվում թումանյանական «երկինքն» ու «երկիրը», այսինքն՝ «Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ» և «հոգու հայրենիքը»: Աստված, որ գեղեցիկ ու բարի է, երկնքից իջնում ու տարածվում է երկրում, մարդը բարձրանում է երկինք ու միանում իր արարչին: Թումանյանական հոգու այս հանգրվանում է մտահղացվել ու իրացվել նրա վերջին ծրագրային բանաստեղծություններից մեկը՝ «Տիեզերքի ընթերցումը»՝ իր բնորոշ ավարտով.

*Վերանում է վեր հոգիս զըվարթուն -
Չըկա մոտ ու տար, չըկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Իսկ ես մի ազատ՝ անտարբեր Աստված:*

Բանաստեղծը վերջապես գտել ու իր ամբողջ ստեղծագործության մարդկանց էր պատգամում «երջանկության գաղտնիքը», ինչպես «Ոսկի քաղաքը» հեքիաթում: Հավատո՞ւմ էր նա այդ գեղեցիկ երազի երբեմնի իրականացմանը՝ դժվար է ասել: Համենայն դեպս, հայտնի քառյակում այս հարցի պատասխանը թեական է. «Երբեմն, ասես, զգում եմ ես, թե կհասնեմ Նրա մոտ...»:

Ժանրային առումով դասական ներբողին ավելի մոտ են Թումանյանի ձևերգերից երկուսը՝ նվիրված Մկրտիչ Խրիմյանին: Առաջինը՝ «Հայ ուխտավորին», գրված է հանպատրաստից¹ 1893-ին Նրա՝ կաթողիկոս օծվելու առթիվ: Մտահղացման հիմքը ուխտավորի և ուխ-

1 Այդ մասին Նվարդ Թումանյանը հիշում է հոր պատմածը. ««Հայ ուխտավորին» երսպրոմտ է: Խրիմյանի ընտրության առթիվ չորս հոգի քեֆ սարքեցինք Օրթաճալում, էն քեֆին գրեցի (Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, 1987, էջ 231):

տագնացության ճանապարհի մտապատկերն է, որն էլ պայմանավորել է ավարտուն քնարաեպիկական կառույցի ձևաիմաստային կերպը:

Ծավալվող պատումի չորս մասերից առաջին երկուսը ներկայացնում են Գեղամա լեռնաշղթայով ու Արագածի զանգվածով եզերված Սևանի ավազանը և ի սկզբանե հայկական բնանկարից անբաժան Արարատը՝ իրենց սրբացած մասունքներով: Տեսարանների բանաստեղծական ընկալումն ու պատկերավոր վերարտադրությունը էապես տարբերվում են Լուռու՝ Թումանյանի շատ ստեղծագործություններից ծանոթ բնապատկերներից: Եթե այս վերջիններում գերիշխողը առասպելական խորհրդավորության ու խրոխտ վեհության շունչն է կամ ծորերի անդնդային խորությունը, որով չափվում է բանաստեղծի «սրտի թախիծն ահավոր», ինչպես նշանավոր «Նախերգանքում», ապա այս դեպքում ուխտավորի հայացքը շոյում են աշխույժ, թեթև, գլարթ ու ոգևորիչ գունախաղերը: Դրանք կենդանի հոգով շնչավորում են Գեղարքունյաց և Արարատյան ողջ բնաշխարհը, որ ուխտավորին դիմավորում են հյուրընկալ սրտաբացությամբ.

*Չեփյուններով, ծաղկանց բույրով,
Ինչպես ծնող սիրագորով,
Քեզ կողջունեն զմրուխտ հագած
Գեղամ սարերն ու Արագած,
Ու կարոտած աչքի նրման
Քեզ կըժպտա վճիտ Սևան,
Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վետ-վետ,
Փայլփլում է ծրփանքներով,
Հորինում է լույսերի ծով...*

Ոգեշնչումի նույն կրակն է ջերմացնում նաև այն տողերը, որ հավերժական լեռան անթիվ նկարների ու նկարագրությունների ծանոթ ընթերցողի աչքին նոր շող ու շուքով են ներկայացնում «Էն սարերի սարն ու արքան», որ՝

*Լազուր երկնի ծոցը մըտած,
Ճերմակ գլուխն ամպեր փաթթած,
Ահա կանգնեց ծանր ու տրտում,
Քուռ առաջնն ու քուռ սրտում...,*

որ՝

*... արդեն քանի սև դար
Պերճ գազաթովն իր ծյունափառ
Շողշողում է, փայլատակում,
Եվ ուխտավոր հայի հոգում
Հպարտության ծնում թունդեր...*

Բնապատկերին իմաստային Նոր լիցք է հաղորդում ուխտավորի այն «սիրելի երազը», թե բիբլիական լեռան կատարին Նոյան տապալի հետքերով դեռ պիտի հանգրվանեն «փառքերն մեր հին», որ «նորափայլ իջնեն կըրկին...»:

Բանաստեղծական խոսքի այս պերճանքը, որ այնքան էլ բնորոշ չէ թումանյանական ոճին, ստեղծագործությանը առաջին անգամ ծանոթացող ընթերցողին տարակույսի առիթ է տալիս՝ ինչո՞ւ, ի՞նչ նպատակով: Երկրորդ մասում տարակույսը կարող է տեղիք տալ ենթադրության, թե գուցե բարեպաշտ ուխտավորի գիտակցության մեջ տեսլացած իրական բնապատկերը հավատավոր հոգումն ներկայանում է սրբության աներկրային փայլով: Այսպես թե այնպես, դրանք, թվում է, ստեղծագործական «խորամանկություններ» են՝ ընթերցողի հետաքրքրությունը լարված պահելու համար: Հեղինակային հղացման իրական աստառը պիտի բացվի քնարաեպիկական պատումի վերջնամասում:

Երրորդ և չորրորդ մասերը, որտեղ վերջապես բացվում է մտահղացման իրական շարժառիթը, գծանիշով առանձնացված չեն, որովհետև երկուսը միասին կառուցվածքային մեկ ամբողջություն են կազմում: Մայր տաճարը՝ հիմնադրման լուսեղեն տեսիլքով, «Լուսավորիչն ու մեծ Տրդատ», որ «տակավին այնտեղ կեցած կըսավառնեն հոգիացած», միասնաբար կազմում են համեմատության եզր՝ Նորընտիր կաթողիկոսի մեծությունը ցուցադրելու համար: Այս ամենը՝ Հայկական լեռնաշխարհի իր «վճիտ Սևանով», «տաճարը սուրբ, լյառն ահագին» մեր հոգևոր պատմության չխամրող փառքերից են.

*Բայց ավելի մեծ ու շքեղ
Արծիվ հայրիկ ունենք էնտեղ,
Ճերմակահեր ու հոգեհուր,
Հսկայատիպ կանգնած ամուր,
Ինչպես կաղնին Լիբանանի,*

*Որ հողմերին ծաղր կանի,
Էնտեղ արթուն կանգնել է նա
Լուսավորչի շիրմի վրա,
Բազուկն հպարտ հենել կողքին,
Կանգնել է մեծ ու ահագին,
Ու արծրվի աչքերն հընոց
Սևեռել է կողմերն Հայոց,
Կողմերն Հայոց ու շատ հեռուն,
Դիտե ցրված իր ծագերուն...*

Այս հատվածն է, որ հյուսված է իրոք դասական ներբողի օրենքներով: Այդ դեպքում, իրոք, ավելորդ չե՞ն ուխտավորի կերպարը կամ հայկական բնաշխարհի ոգեշունչ նկարագրությունները: Հարցի պատասխանը պետք է փնտրել մտահղացման ենթատեքստում: Ստեղծագործության հուզական մթնոլորտը լիցքավորող տոնական տրամադրությունը նշանակում է, որ հայրենի բնաշխարհն էլ է մասնակցում համընդհանուր ցնծությանը, իսկ ուխտավորը ժողովրդի պատվիրակն է, որ բոլոր հայ հավատացյալների շուրթերով պիտի համբուրի նորընծա հայրապետի աջը:

Ձոներգը գրված է կից հանգավորմամբ, ուղղանկյունի տողաչափով, որոնց աշխույժ ու թրթռուն ընթացքը միանգամայն պատշաճ է տոնական ընդհանուր տրամադրությանը: Ստեղծագործությունը թեև եքսպրոսիտ է, բայց մասերի համաչափությամբ ու փոխկապակից հարաբերություններով,¹ հնչելու ռիթմիկայով, խորհրդանշական արտահայտությունների խնայողաբար ու տեղին գործածությամբ, պատկերների թարմ ինքնատիպությամբ գեղարվեստական գրեթե անթերի կառույց է ներկայացնում: Ուշագրավ է, որ հինգ տարի անց՝ առաջին անգամ տպագրության պատրաստելիս, բանաստեղծը հարկ է համարել կատարել միայն ոճական մասնակի սրբագրումներ:²

Գեղարվեստականության առումով «Հայ ուխտավորին» ձոներգը Թումանյանի վաղ շրջանի քնարաէպիկական փորձերի լավագույններից է, և պետք է դասել նրա այդ ժանրի ստեղծագործության ընտիր

¹ Առաջին երկու մասերը միմյանցից և բանաստեղծական պատումի ավարտական հանգույցներից առանձնացված են գծանիշերով՝ կառուցվածքային որոշակի նկատառումով, քանի որ ներկայացնում են հայկական բազմաբղետ բնաշխարհի երկու տարբեր գոյավիճակներ՝ ձևափաստային տարբեր գործառույթներով: Ընդհանրությունը երկուսին միավորող ոգեշնչումի վերելքն է:

² Տե՛ս Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 1, 2018, էջ 479-480:

Էջերի շարքը: Բանաստեղծն ինքն էլ անշուշտ զգացել է դա. չի հետևել ընկերների հորդորներին և չի ոչնչացրել¹ ստեղծագործական պայծառատեսության այս բացառիկ ակնթարթի գեղեցիկ արգասիքը:

Երկու տարի անց՝ 1895 թ., Թումանյանն առաջին անգամ հանդիպում է կաթողիկոսին, որով սկիզբ է դրվում նրանց հետագա մտերմությանը:² Արդյունքը լինում է նոր ծոներգը՝ «Կաղնին»:³ Այս խորագիրը, անշուշտ, կապված է Նախորդ ծոներգի հիշողության հետ, որտեղ բանաստեղծը նորընտիր կաթողիկոսին մեծարում էր ավանդական այդ այլաբանությամբ: Անտառում բոլորից վեր բարձրացած «ծերունի կաղնին» ռոմանտիկական ավանդույթից լավ հայտնի մենավոր ծառի խորհրդանիշն է, որ այլաբանորեն ներկայացնում է ամենայն հայոց «հայրիկին»: Տարվա բոլոր եղանակներին կաղնուն սպառնացող բնության տարերքները խորհրդանշում են այն բոլոր խոչընդոտներն ու փորձությունները, որոնց հարկադրված էր դիմակայել անսկույն կաթողիկոսը: Վերջին թափանցիկ երկտողը՝

«Սա, որ վերև է բարձրացել այսքան,

Ոչ որոտ գիտի, ոչ քամի, ոչ բան...»,

որ չակերտների մեջ է առնված՝ որպես ուրիշի խոսք, «չնչին դժգոհների»՝ Նախանձոտ բամբասանքներն են, որ պիտի ուղեկցեին նրան ամբողջ գործունեության ընթացքում: Այս երկտողի նախօրինակը Նախորդ ծոներգի «Որ հողմերին ծաղր կանի» տողն է: Ինչպես երևում է, նորընծա կաթողիկոսի կերպարը այդ երկու-երեք տարիների ընթացքում մշտապես եղել է բանաստեղծի խոհերի ու մտորումների կենտրոնում:⁴

1 Ճոներգի հետ կապված այդ պատմությունը հետևյալն է: Կաթողիկոս ընտրվելուց հետո Խրիմյանն Էջմիածնում կատարում է մի շարք կադրային և այլ փոփոխություններ, որոնք ոգևորված երիտասարդության շրջանում հիասթափություն են առաջացնում: Ընկերները հորդորում են բանաստեղծին «կորցնել»՝ ոգևորության պահին գրած ծոներգը: Նա պատասխանում է. «Ինչո՞ւ կորցնեմ, այն կմնա իբրև հիշատակ մեր առաջին զգացումների»: Միաժամանակ սկսում է գրել մի նոր բանաստեղծություն՝ «Եթե այդպես է, մենք կխորտակենք // Այն պատվանդանը, որ մենք կառուցինք...» սկսվածքով, որ չի շարունակել (տե՛ս՝ ԹՏ (1869-1928), էջ 209-210):

2 Տարիներ անց, երբ Վասպուրականի արծիվն արդեն չկար, բանաստեղծը գոհունակությամբ պիտի գրեր. «Երկար տարիներ ունեցել եմ Խրիմյանի մոտիկությունը վայելելու պատիվը (Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 6, 1994, էջ 368):

3 Թումանյանի կենդանության օրոք չի տպագրվել:

4 Հետագայում Խրիմյանի կերպարին Թումանյանն անդրադարձել է ևս երկու անգամ: 1907 թ. կաթողիկոսի մահվան առիթով գրում է «Երկու հայր»՝ հուզիչ պատմվածքը, որի հիմքում, ինչպես կարծում են ուսումնասիրողները, ընկած է

Ձոներգն ունի ենթավերնագիր՝ «Հայրիկին», և ընծայական «Նվեր իշխ. Մ. Թ<ումանյանին>»: Չուգադիպությունը, որ քիչ է հանդիպում այդ ժանրի գործերում, թվում է, պատահական չէ. իշխանուհու հասարակական-մշակութային անձնվեր գործունեության մեջ երիտասարդ բանաստեղծը նպաստավոր ընդհանրություններ է տեսնում կաթողիկոսի հայրենանվեր առաքելության հետ:

Ավելի ուշ շրջանի թումանյանական ձոներգերում նվիրված հատկապես հայ ժողովրդի և հայ մշակույթի հետ տարբեր առնչություններով կապված այլազգի գրողների կամ գործիչների, քնարական իրադրության բնույթը փոխվում է. սկսում է գործել չարի և բարու, մարդասիրության ու մարդատյացության մասին թումանյանական բարոյափիլիսոփայությունը՝ ամեն անգամ կենսական փաստի թելադրած որոշակի ուղղությամբ ու դրվածքով:

«Երկու հոգի» (1912)¹ ձոներգը նվիրված է իրավաբան Օսկար Գրուզներբերգին, որ պետերբուրգյան հայտնի դատավարության ժամանակ պաշտպանում էր Թումանյանի դատը: Նրա կերպարն ուրվագծվում է չար ու բարի հոգիների հավերժական գոյակցության ու փոխադարձ բացասման հանգույցում: Մեկը «ցավ» է բերում, մյուսը՝ «սեր», և դա գոյության հարափոփոխ ընթացքի պայմանն է: Բայց հիմքը «սերն» է.

*Մինը մարդու օրենքն ունի,
Որ միշտ մարդուն ցավ է բերում,*

1896-ի կոտորածներից մազապուրծ Էջմիածին հասած սասունցի մի քահանայի իրական պատմությունը: 1910-ին Իզմիրյան կաթողիկոսի մահվան առիթով գրում է «Խրիմյան և Իզմիրյան» հոդվածը, որտեղ խորաթափանց բնութագրումներով ներկայացնում է երկու նշանավոր գործիչների բնավորության ընդհանրություններն ու տարբերությունները: Այդ բնութագրումներից. «Իզմիրյանը գահն էր իրենից բարձր նկատում, Խրիմյանը իրեն էր գահից բարձր համարում», «Իզմիրյանը սիրում էր խորհուրդ հարցնել, Խրիմյանը վիրավորվում էր, երբ խորհուրդ էին տալիս», «Իզմիրյանը մարդկանց հարգանքով էր վերաբերվում, Խրիմյանը՝ հեգնանքով», «Իզմիրյանը պարզ էր ու բաց սիրտ, Խրիմյանը բարդ էր ու խորը»: «Իզմիրյանը անկասկած մաքուր էր, Խրիմյանը՝ անպայման մեծ» (նույն տեղում, էջ, 268-269):

1 Հատկանշական է, որ այս թվականին Թումանյանից քնարական այլ ստեղծագործություն հայտնի չէ: Գրել է երկու պատմվածք՝ «Ուրախ գիշեր», «Ալլահից դրկած», որոնք բարոյափիլիսոփայությամբ համահունչ են «Երկու հոգի» ձոներգին, և «Քաջ Նազար» հեքիաթը: Քնարերգության մարզում ստեղծագործական այդ «ամլության» պատճառը բանաստեղծի հոգեվիճակն էր «Տևական լարվածությունից հետո վրա հասած անխուսափելի թուլության» մասին նա գրում է 1912 թ. հուլիսին Մարիամ Թումանյանին ուղղված նամակում (տե՛ս Հովհ. Թումանյան ԵԼԺ, հ. 10, էջ 154-156):

*Մյուսը մարդու և Անիունի,
Որ և անհուն սեր է բերում:*

*Եվ օրհնեալ է, ով այդ սիրով
Կյանքի ճամփում ընկնող մարդուն
Պաշտպանում է եղբոր ծեռքով,
Տանում դեպի խաղաղություն:*

Բանաստեղծի հոգում այսպես է կենդանագրվել իր «տաղանդավոր պաշտպանի» մտատիպարը:¹

Վերջին քառատողում հոգեբանական պահի իմաստային տարողությունը համարվում է թումանյանական հումանիզմի հիմնարար արժեքներով: Իր պաշտպանի կերպարում հայտնաբերելով ոչ միայն մարդու, այլև Անիունի, այսինքն՝ աստվածային բացարձակ սիրո ու բարության օրենքներով առաջնորդվող ազնվական հոգի, գտնում է նաև սեփական հոգու խաղաղությունը, վերականգնվում է խարխված հավատը մարդու հանդեպ:

*Ահա ինչու էս աշխարհքում
Խաղաղ է միշտ և իմ հոգին,
Պաշտպանում է նա իր խորքում,
Սիրում է ողջ ու ամենքին:*

Համընդհանուր սիրո թումանյանական բարոյափիլիսոփայության շրջանակներում պետք է դիտել նաև Վրաստանի թեմայով երկու բանաստեղծությունները՝ «Վրաստանի համար» (1916) և «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» (1919), որոնք, գրված լինելով որոշակի առիթների բերումով, ձևաբովանդակային հատկանիշներով մերձենում են ծոներգին:

1 Օսկար Օսիպովիչ Գրուզեցերգը՝ իբրև զարգացած ու լայնահայաց մտավորական, շատ լավ է հասկացել գործի բնույթը և հենց իրեն՝ բանաստեղծին: Պաշտոնի բերումով նա հաճախ է հանդիպել իր պաշտպանյալի հետ, և նրանց միջև հավանաբար հաստատվել է նաև գաղափարական փոխադարձ համակրանք: Այդ հանդիպումների մասին նա մի անգամ պատմել է բանաստեղծի դստերը՝ Աշխենին. «Գնում եմ մոտը՝ գործի հետ ծանոթանալու, իրեն նախապատրաստելու, չէ՞ որ շուտով կսկսվի նրա գործի քննությունը, վկաների հարցաքննումը, դրանց մեջ կան մարդիկ, որ հատուկ եկել են նրան խորտակելու: Ասում, ներշնչում եմ նրան այս բոլորը, իսկ նա՝ ոչ մի ուշադրություն, շատ հմուտ կերպով խոսքը դարձնում է գրական ու փիլիսոփայական հարցերի շուրջ, և ցավալիս այն է, որ նրան հաջողվում է ինձ գրավել այդ նյութերով: Երկու ժամ մոտը մնալուց հետո դուրս եմ գալիս փողոց և նոր եմ սթափվում ու հասկանում, որ ըստ էության գործի վերաբերյալ իրենից ոչինչ չիմացա» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 639):

Առաջինի առիթը ռուս և վրաց մամուլի այն հրապարակումներն էին, որոնց նպատակն էր ազգամիջյան հակամարտություն հրահրել հայ և վրացի ժողովուրդների միջև: Մասնավորապես, ինչպես տեղեկացնում է Թումանյանը «Ի՞նչ են ասում...» հոդվածում, լուրեր էին տարածվում, թե իբր Վրաստանի թեմի առաջնորդ «Մեսրոպ եպիսկոպոսը զենքեր է ստանում ու բաժանում հայերին: Անդրանիկն էլ խմբեր է կազմում վրացիների դեմ»:¹ Բանաստեղծը դա համարում է չարամիտ սադրանք և վիրավորանք երկու բարեկամ ժողովուրդների համար.

*Երբ խոսում են Վրաստանի
Թըշնամանքից արյունոտ,
Չարմանք է ինձ պատում հայտնի,
Եվ խորին ցավ, և ամոթ:*

Ներբողում է վրացու աղ ու հացը, հոգու բարությունն ու զվարթ կենսասիրությունը: Նույն շնչով հոգվածում հանձին Անդրանիկի ներկայացվում են հայ մարդու հոգու վեհությունն ու ազնվությունը: Հիշատակվում են զորավարի խոսքերը, որ նա, ինչպես վկայում է բանաստեղծը, հաճախ էր սիրում կրկնել. «Երբ իրիկունները գլուխներդ բարձին կոնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին: Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի, և բարի մտածեցեք...»:² Կարելի է ասել՝ բանաստեղծությունը հոգվածի չափածո տարբերակն է, և իզուր չէ, որ կրում է «Հոգվածի փոխարեն» ենթավերնագիրը:

«Նվեր Վրաստանի բանաստեղծներին» ձևը հեղինակը կարդացել է 1919 թ. ապրիլի 16-ին Տիգրան Տաբիճեի մեծարման երեկոյին:³ Բայց գրության բուն առիթը սահմանային վեճերի շուրջ հայ-վրա-

1 Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 261:

2 Նույն տեղում, էջ 262:

3 Տաբիճեի և Նրա ընտանիքի հետ Թումանյանի հարաբերությունները ջերմ ու մտերմական են եղել: Նիկո Տաբիճեն գրում է. «Մի անգամ Տիգրան Տաբիճեի հետ գնում եմ Ռուսթավեի պողոտայով... Հանկարծ տեսնեմ հեռվից գալիս է մի բարձրահասակ ծերունի, ասես արև ճառագայթելով իր շուրջը, թվում էր, նա կյանք ու բերկրանք է տալիս ողջ շրջապատին...»

Ես կանգ առա: Ինչ-որ անբացատրելի մի բան հուզեց ինձ. բռնեցի Տիգրանի ձեռքը և հարցրի.

-Ո՞վ է նա:

Ծերունին մոտեցավ մեզ և պայծառ ու զվարթ ժպիտով իր երկու ձեռքը մեկնեց Տիգրանին: Հովհաննես Թումանյանն էր, հայ հայտնի բանաստեղծը, հայ ժողովրդի ազնվության և դարավոր տառապանքների լավագույն արտահայտիչը: Այդ օրվանից ես գտա հայր, որ չունեի...» (Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 731-733):

ցական զինված ընդհարումներից հետո կնքված հաշտությունն էր, ինչպես նաև դրանից առաջ Տաբիձեի հրապարակային նամակը հայ բանաստեղծին: Մտահոգման նախապատմության մասին հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել այդ նամակից¹ և դրա պատասխանից²:

Վրացական գոնազարդ հաճոյախոսություններ շռայլելով հայ բանաստեղծի հասցեին, թե «ոչ ոք ավելի իրավունք չունի Հայաստանի ժողովրդի անունից խոսելու», որքան նա, հիշեցնելով նրա միտքը, թե՝ «ամեն մի պատերազմից պիտի հաղթող դուրս գա ճշմարտությունը և կոչտուրան»³, - նամակագիրը, ինչպես ասում են, «խոսքի տակով» ուզում է հասկացնել, թե վրացական կողմը իր սահմանային պահանջներում իրավացի է, և հայ բանաստեղծի պարտքն է այդ «ճշմարտությունը» հասցնել յուրայինների գիտակցությանը: Դա են հաստատում նաև նամակի վերջին տողերը. «Ես և այն վրացի բանաստեղծները, որոնց Դուք ճանաչում եք - Ձեզ պատվելու մեջ միացած - մտածում ենք, որ կկտրվի պատերազմ սկսողի ձեռքը, Հայաստանի ժողովուրդն էլ կազատվի Աղասվերի ճանապարհից, և Ձեր ու ձեր նման հարգելի բանաստեղծներով լուսավորված ճանապարհը կմնա Ձեր խաղաղ սահմաններում»⁴: Հասկանալով նամակի բուն նպատակը՝ Թումանյանը չի շտապում պատասխանել և Տաբիձեին ուղղված երկտողով բացատրում է. «Ձեր նամակից անմիջապես հետո սկսվեցին հաշտության բանակցությունները: Եղ պատճառով ես հետաձգեցի իմ պատասխանը, որովհետև բանակցությունների էս կամ էն ելքը մեծապես ազդելու էին իմ պատասխանի բնավորության վրա: Այժմ, բարեբախտաբար, հաշտությունն արդեն կայացած է և

1 Տաբիձեի բաց նամակը տպագրվել էր «Սաքարթվելո» թերթի 1919 թ. առաջին համարում, հայերեն թարգմանությունը՝ «Ժողովրդի ձայն» թերթի վեցերորդ համարում:

2 Թումանյանն իր պատասխանը գրել է հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին՝ երկտողով տեղեկացնելով, թե ինչու է ուշացրել. «Ձեր նամակից անմիջապես սկսվեցին հաշտության բանակցությունները: Եղ պատճառով ես հետաձգեցի իմ պատասխանը, որովհետև բանակցությունների էս կամ էն ելքը մեծապես ազդելու էին իմ պատասխանի բնավորության վրա: Այժմ, բարեբախտաբար, հաշտությունն արդեն կայացած է և էլ չի ուշանալ Ձեր պատասխանը» («Ժողովրդի ձայն», 1919, հունվարի 21):

3 Կոչտուրայի մասին ակնարկով հիշեցնում է, որ Թումանյանը իր «Что может делать Грузия?» (1918) հոդվածում Վրաստանը համարել է «կոլկասյան Ֆրանսիա» (ԹՏ (1915-1919), էջ 520):

4 ԹՏ (1916-1919), ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1919, էջ 639:

Էլ չի ուշանալ Ձեր պատասխանը»:¹ Եվ գրում է այդ պատասխանը, բայց այնպես էլ չի տպագրում,² որովհետև մտքում արդեն ձևավորվում էր չափածո պատասխանի ուրվագիծը: Այնպես որ՝ «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» ձոնը վրացի և հայ երկու բանաստեղծների՝ լարվածությունը հմտորեն քողարկած հոգեբանական երկխոսության արգասիքն է:

Ձոնը ևս թումանյանը հարկ չի համարել տպագրել, անգամ ռուսերեն թարգմանության տպագրությունից հետո:³ Հարցը ծագում է անմիջապես՝ ինչո՞ւ: Այս հարցին ուղղակի ու միանշանակ պատասխանել հազիվ թե հնարավոր լինի: Բայց որոշ ենթադրությունների հիմք տալիս են բանաստեղծի՝ այդ օրերի հոգեվիճակը և նրա պատասխանը Տաբիձեի նամակին:

Հայաստանի անկախ հանրապետությունը մեկ տարի է, ինչ կայացած իրողություն էր, Վրաստանի հետ սահմանային վեճերն արդեն հարթված էին: Թվում է՝ բանաստեղծի հոգին պետք է որ խաղաղված լիներ: Իրականում, սակայն, այդպես չէր: Այսպես, Տաբիձեի նամակի պատասխանում հուսալի առաջընթաց է համարում, որ ազգերի լիզայի ստեղծմամբ «համերաշխության ու եղբայրության խնդիրը բանաստեղծությունից անցել է քաղաքականությանը»:⁴ Միաժամանակ նկատում է, ինչպես շատ ուրիշ ամիթներով, որ համերաշխ ու խաղաղ աշխարհի երազանքը դեռ հեռու է իրականությունից. մինչ այդ ի՞նչ իմանաս՝ ինչ տղ ցնցումներ են սպասում աշխարհին, որ կործանարար կարող են լինել հատկապես փոքր ազգերի համար: «Նայեցեք Հայաստանին, - շարունակում է բանաստեղծը, - որի համար եղբան գեղեցիկ բարեմադրություններ եք անում: Ես համատարած ահռելի թշվառության մեջ ո՛չ մեր ապիկարությունը սահման ունի, ո՛չ թշնա-

1 Նույն տեղում, էջ 640-641:

2 Առաջին անգամ հասկանալի կրճատումներով հրապարակել է Ա. Ինճիկյանը («Սովետական գրականություն», 1962, № 3, էջ 110-113):

3 Ձոնը բանաստեղծի կենդանության ժամանակ լույս է տեսել ռուսերեն Ս. Գորոդեցկու թարգմանությամբ: Հայերեն առաջին անգամ հրատարակել է Ի. Գրիշաշվիլին «Джейран» ժողովածուի մեջ 1919 թ.: Հայերեն առաջին անգամ հրատարակել է Ի. Գրիշաշվիլին արդեն բանաստեղծի մահից հետո՝ 1929 թ., տե՛ս Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 1, 1918, էջ 715-716:

4 Ակնարկը վերաբերում է Տաբիձեի նամակի սկզբին. «Քաղաքականությունը Հայաստանի և Վրաստանի բախտի վճիռը հանձնեց արյունոտ սրին, - մինչև որ դեմոկրատիան սպառեց խաղաղ ճանապարհով հաշտություն ձգելու բոլոր միջոցները, - սակայն դեմոկրատական սրից էն կողմ էլ խոսում է բանաստեղծությունը» (ԹՏ (1915-1919), էջ 637):

միևնույն անգթությունը, և նա գրեթե մահվան դուռն է հասել: Գոնե ինձ այլևս չեն ուրախացնում ո՛չ հանրապետություն, ո՛չ անկախություն խոսքերը: Կորցրել եմ ուրախասալու ընդունակությունը: Կարծեք թե արտասուքի տակից այլևս չեմ նկատում նրա նոր ծագող արշալույսը: Ընդհակառակը, մռայլ կասկածները սարսափ են ազդում դեռ մոտակա օրերի վերաբերությամբ, և ես այժմ միայն մի բան եմ ցանկանում նրան՝ մի հաստատուն, հզոր ու լուսավոր մի հովանավորություն, որ նա փրկվեր էս դրությունից և կազդուրվեր ժամանակի ընթացքում»¹: Ինչպես հայտնի է, բանաստեղծի «մռայլ կասկածները» շուտով իրականություն պիտի դառնային...

Ինչո՞վ է արդարացված, ուրեմն, «եղբայրական երգ ու սերի», «հանուր բերկրանքի», «խրախճանքի» տրամադրությունը, որով շնչում է ձոնը: Դա պայմանավորված է ամենից առաջ ժանրի բնույթով և երեկոյթի մթնոլորտով: Ձոնը, անշուշտ, մտահոլացված է հենց իբրև ողջույնի խոսք Տաբիթեին և վրացի բոլոր բանաստեղծներին.

-Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, Աստվածային

Արի, բարի ընկերներ,

Արարատի կողմից էն հին -

Եղբայրական երգ ու սեր:²

Աստվածային բնութագիրը վերաբերում է ոչ թե «ողջո՛ւյն»-ին, այլ՝ «արի, բարի» ընկերներին: Այսինքն՝ բանաստեղծի լեզվով Աստված ինքն է խոսում: Այդ մասին ուղղակի ակնարկվում է նաև նախավերջին երկու քառատողերում.

Չարկե՛ք ուժգին մեծ Շոթայի

Էն քընարը ոսկելար,-

Մարդը ինչ տա -էն կըշահի,

Թող իմանա ողջ աշխարհ.-

Տեսի քանի նոր ձենով է

խոսում Աստված³ Էս երկրում,

1 ԹՏ (1916-1919), էջ 645:

2 Քառատողը խորհրդային շրջանի բոլոր հրատարակություններում, այդ թվում նաև ակադեմիական երկու բազմահատորյակներում տպագրված է հասկանալի խմբագրությամբ. *Աստվածային* բառը փոխարինված է *ձեզ հին ու նոր* կապակցությամբ, *Արարատի էն հին* վերադիրը դարձել է *Էսօր*, որպեսզի հանգ կազմի առաջին փոխված տողի հետ:

3 Խորհրդային հրատարակություններում *Աստծու* փոխարեն խոսում է *մուսան*: Ինչպես նախորդ, այնպես էլ այս դեպքում խմբագրումները արմատապես փոխել են

*Պատգամներով պայծառ ու վեհ,
Հազար ու մի երգերում:*

Անշուշտ անկեղծ է հայ բանաստեղծը իր այս սրտաբուխ գեղումների մեջ: Այն, ինչը որպես իրականություն այդքան ոգևորել էր բանաստեղծին, ամբողջ կյանքում նրա հոգուն ու երևակայությանը թև ու թռիչք էր տվել իբրև նվիրական երազանք: Հիշենք, օրինակ, նրա թերևս ամենատխուր բանաստեղծության ավարտին հնչեցրած այն հավատը, թե՛ «պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հազած», թե՛ իրենց շուրթերը անեծքով չպղծած «պոետներ» պիտի գան՝ «նոր երգեր» երգելու ու «նոր խոսք» ասելու աշխարհին:

Բայց այս ամենով հանդերձ, անկասկած է նաև, որ վրացի բանաստեղծի նամակի թաքուն խորհուրդը հաճելի նստվածք չէր թողել նրա հոգում: Հոգվածում անուղղակի ակնարկներ կան այդ մասին: Ոչ մի ժողովուրդ պատերազմ չի ուզում, իրավացիորեն նկատում է բանաստեղծը: Բայց երբ հարկ է լինում, շարունակում է նա, կառավարությունները «մի որևէ ստով, մի որևէ լոգունգով» կարողանում են հարբեցնել ժողովրդին և սանձազերծված ամբոխային էներգիան ուղղել իրենց ցանկացած ուղղությամբ: Ցավով արձանագրում է, որ հաճախ բանաստեղծներն էլ են ենթարկվում դրան, և «աստվածային ոգևորությունը փոխարինվում է բարբարոսի կատաղությամբ»: Այնուհետև. «Ինչքան զազրելի է էն սոցիալիստը, որ սուրը ձեռքին վեր է կացել և սոցիալիզմի անունով, աշխատավոր ժողովրդի անունով կոտորած է անում, իշխանություն ու երկիր է հափշտակում, նույնքան էլ գարշելի է, երբ գեղարվեստի մարդը, աստվածային սիրո և եղբայրության զգացմունքի փոխարեն, ատելության ու շովինիզմի կիրքն է բորբոքում մարդկային սրտերում»:¹

Այս քաղվածային վկայակոչումները օգնում են նաև ճիշտ հասկանալու ձոնի մի քառատողը.

*Շատ, շատ արցունք թափվեց մեզնում,
Մեն մի կաթիլն – մի խրրատ,
Անլուռ, անդուլ են է ասում –
Ճամփա չունի գործը վատ:*

բնագրի իմաստը: Ակադեմիական տասհատորյակի վերջին վերախմբագրված հրատարակության առաջին հատորում, ըստ պահպանված ինքնագրի, վերականգնված է բնագրի տեքստը:

1 ԹՏ (1915-1919), էջ 645:.

Հայտնի է, որ լավ ու վատ գործի գաղափարը Թումանյանի բարոյափիլիսոփայության անկյունաքարերից է: Գիտենք նաև, որ ոչ մի անգամ խնդրին չի անդրադառնում ընդհանուր վերացական դրվածքով: Այս դեպքում ևս գրեթե կասկած չկա, որ բանաստեղծը նկատի ունի Վրաստանի տարածական նկրտումները առանց այն էլ չորս կողմից արդեն բզկտված իր հարևանի հանդեպ և այն, որ այդ քայլը արդարացնում են բանաստեղծները:

Այս ամենից հետո, թվում է, հասկանալի պիտի լինի, թե ինչու Թումանյանը չուզեց տպագրել ո՛չ իր պատասխան նամակը, ո՛չ ձևը: Նա զգուշանում էր, որ կարող են իրեն միակողմանի հասկանալ, իսկ հոգու «տխուր հատակը» կարող են չտեսնել կամ չտեսնելու տալ: Իսկ դրա համար նա հիմք ուներ. խորհրդային տարիների ամբողջ ընթացքում Վրաստանի թեմայով նրա այդ գործերը մեկնաբանվում էին՝ հարմարեցվելով իշխող գաղափարախոսությանը, հարկ եղած դեպքում, ինչպես տեսանք, անգամ աղավաղելով բնագիրը:

«Նվեր Վրաստանի բանաստեղծներին» ձևը Թումանյանի երկրորդ հոգեզրույցն էր իր այլազգի գրչակիցների հետ: Առաջինը երեք տարի առաջ՝ 1916 թ., Վալերի Բրյուսովին ձևված ոտանավորն է՝ գրված հայոց բանաստեղծության մասին Թիֆլիսում նրա կարդացած հայտնի բանախոսության առթիվ: Տարբեր ժամանակներում ու տարբեր առիթներով հյուսված այս երգերը բովանդակությամբ նույնանում են. երկու դեպքում էլ բանաստեղծը բարձրաձայնում է ժողովուրդների համերաշխության ու սիրո, համընդհանուր եղբայրության իր նվիրական երազանքների մասին.

*Աշխարհից աշխարհ թող ձեն տան իրար,
Որոնք իշխում են մարդկանց սրտերին,
Ազգերն ինչ ունեն ազնիվ ու պայծառ,
Թող ի մի բերեն էս դառն օրերին:*

*Եվ թող սրտերի դաշըն կապեն կուռ,
Ամուր շաղկապեն անսահման սիրով,
Շնչեն կենդանի մի շունչ ընդհանուր,
Կյանքը ջերմացնեն հոգեղեն հըրով:*

Եվ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝

*Թե ով ավելի ուժգին կըսիրի,
եվ թող մի մրցում լինի միշտ անվերջ՝
Բարու, գեղեցկի ու վեհ գործերի:*

Բայց եթե տարիներ անց վրացի գրչակիցների հետ նրա գրույցը այնքան էլ սրտաբաց չէր, որովհետև նրանք իրենց աստվածային շնորհը ծառայեցնում էին կառավարողների շահերին, ապա այս դեպքում նրա խոսքը ռուս բանաստեղծին ամբողջովին բաց ու լիասիրտ է.

*Մեզ մոտ եք եկել ձյունի աշխարհից,
Կոչում դեպ բարին, դեպ վեժն ու սեր
Մեր ցավոտ սրտում զարթնում են նորից
Երջանիկ կյանքի իղծեր ու հույզեր:*

Այս ձոնը ևս Թումանյանը չի տպագրել՝ հավանաբար զգալով, որ դա ոչ այնքան ուղերձ է ռուս բանաստեղծին, որքան գրույց ինքն իր հետ. հայ հազարամյա բանաստեղծական մշակույթի մասին Բյուլսովի հիացական գնահատականները վերստին լուսավորել էին «շքեղ երազների» այն նվիրական աշխարհը, ուր միշտ ձգտել էր նրա հոգին: Բանաստեղծության բառապաշարն ամբողջովին ծաղկաքաղ է հայ բանաստեղծի բազմամյա ստեղծագործական բառարանից: Հատկանշական է, որ Բյուլսովի բանախոսության երեկոյին կարդացել է ոչ թե այս բանաստեղծությունը, այլ՝ Գրողների ընկերության անունից իր շնորհակալական խոսքը, ուր ոչ պակաս բանաստեղծական արձակով արտահայտվել են նույն «իղծերն ու հույզերը»:¹

1 Մի ուշագրավ մանրամաս: Տիցիան Տաբիժեն Թումանյանին ուղղված իր հրապարակային նամակում, որի մասին խոսք եղավ վերևում, ամեն առիթով հիշեցնում էր Կովկասում Վրաստանի առանձնահատուկ պատմական դերի, վրաց ժողովրդի ազգային-բարոյական ինչ-ինչ առաքինությունների մասին, իսկ հազարամյա հարևանին իր ազգային անունով էլ չի կոչում, անվանում է «Հայաստանի ժողովուրդ»: Հայ բանաստեղծի բարեկրթությունը թույլ չի տալիս նույն կերպ պատասխանել, հիշեցնում է միայն այն բարենպաստ պատմական հանգամանքների մասին, որ միշտ ուղեկցել են Վրաստանին: Հիշեցնում է նաև այն արհավիրքների մասին, որ ինչպես պատմության ընթացքում շատ անգամ, այնպես էլ այդ օրերին սպառնացել են հայ ժողովրդի բուն գոյությանը: Բյուլսովի դեպքում, չնայած բանաստեղծի հոգում դեռ թարմ էին 1915-ի ազգային մեծ աղետի բացած վերքերը, ռուս բանաստեղծին ուղղված երախտագիտության խոսքերից անբաժան է նաև ազգային հպարտության զգացումը: Նա հայոց բանաստեղծությունը անվանել է ազգի «ազնվականության վկայական»: Հայ բանաստեղծը արձագանքում է հոգու անհուն «հրճվանքով. «Այո», մեր թանկագին հյուր և ազնիվ բարեկամ, մենք միշտ ունեցել ենք էդ բարձր վկայականը: Բայց էդ վկայականը էն վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, էդ են վկայականներից է, որոնց վրա բնությունն ու աստված են դրել իրենց կնիքը, և, դրա համար էլ, ինքքան դժվար է դրա ունենալը, էնքան էլ դժվար է կարդալը: Սա էն գիրն է, որի մասին մեր Սայաթ-Նովեն ասում է.

Ձյունոտ հյուսիսի և արևային հարավի զուգադիր մտապատկերը այլ կերպ է իմաստավորվում Նիմֆա Գորոդեցկուն ծնված ոտանավորում: Գրված է 1918 թ. հունվարի 29-ին «Փարվանա» բալլադի այն օրինակի շապիկին, որ բանաստեղծը նվիրել է Սերգեյ Գորոդեցկուն կնոջը: Մտերմական ընծայագրի և տխուր խոհագրության ոճական տարրերի համադրությամբ հանպատրաստից ներշնչանքով ստեղծվում է յուրօրինակ քնարական մթնոլորտ: Այնպես է ստացվել, որ հյուրընկալ երկրի երկինքը «ահեղ, շանթաբեր սև-սև ամպերով» է դիմավորում արև վայելելու եկած հյուրին.

*Մեզ մոտ էլ, ավա՛ղ,
Արև ու խաղաղ
Անկյուն չըկա էլ,
Ուր որ կարենանք
Գոհ ու անվտանգ
Ձեզ պահել, շահել:*

Չես կարող չհիշել տակավին երեք տարի առաջ Նույն տրտունջով հյուսված մի ուրիշ քառատող.

*Ու ոչ մի երկիր չըկա հանգչելու
Խոր, արարչական հանգիստն անխըռով,
Ու ոչ մի անկյուն չըկա շընչելու
Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...*

Եթե այս տողերը գրելիս բանաստեղծը արարչական «բարձրից» էր դիտում «գեղեցի՛կ, անվերջ» աշխարհում «անծուկ» հայրենիքը, ապա երեք տարի անց ինքն էր հայտնվել իր «անծուկ» հայրենիքին սպառնացող «դժնդակ փոթորկի» հողմապտույտում...

Բայց Թումանյանը Թումանյան էր հենց նրանով, որ հարկ եղած դեպքում կարողանում էր ամենածանր ապրումների ճշումը փարատել հոգին թեթևացնող անակնկալներով: Այս անգամ էլ ավերված երկրի սառնաբեր շունչը ջերմացնում է հյուրամենծար հայի շոյող սրտաբացությամբ՝ չմոռանալով, իհարկե, իրեն հատուկ նրբահյուս հումորը.

Արև ու լավ օր,

-Ամեն մարթ չի կանա կարթա, իմ գիրըն՝ ուրիշ գըրեն է...

Դուք եղաք են հազվագյուտ մարդկանցից մինը, որ կարողացաք կարդալ ես կախարդական գիրը ամբողջ աշխարհի առջև...» (Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, 1995, էջ 219-221):

Երագուն ու խոր
Մեր սըրտումն են արդ,
Իսկ դուք, մեր փերի,¹
Գիտեք սըրտերի
Ճամփաները բարդ:

Էնտեղ ապրեցեք
Ու Էնտեղ կացեք.
Մեր հյուր թանկագին,
Դըրանից ավել
Չի էլ գըրավել
Դեռ կյանքում մի կին:

Թումանյանական «վշտի», «թախծի», «տրտունջի», «հառաչանքի» պատկերները գրեթե միշտ ուղեկցվում են այսպիսի հոգեբանական «շրջադարձերով», որ հաճախ բերվում են իբրև թումանյանական հայտնի «լավատեսության» վկայություն: Իրականում, սակայն, դրանք հոգու «տխուր հատակը ծածկելու» ջանքեր են միայն:

Թումանյանի բոլոր այս ծոներգերը մեկը մյուսից տարբեր ու ինքնատիպ հղացումներ են՝ ամեն մեկն իր յուրահատուկ կառուցվածքով, շեշտադրությամբ ու բազմակողմ կապերով բանաստեղծի ստեղծագործական աշխարհը ձևավորող հիմնային արժեքների հետ: Այս դիտակետից էլ փորձ արվեց քննել ու մեկնաբանել դրանք:

VLADIMIR KIRAKOSYAN - TUMANYAN'S DEDICATION POEMS (contextual examinational overview) - In this article Tumanyan's dedication poems are observed in the unified context of his work. Along with some of the genre features of classical dedication poems these works greatly bear the stamp of time and authorial personality.

They are written for certain occasions or dedicated to certain people. But in each case they make sense within the framework of the poet's creative thinking and artistic moral philosophy contributing to the correct interpretation of some aspects of his aesthetic-worldview preferences. This article is the first attempt of systematic analysis of this remarkable page of Tumanyan's lyric.

Key words - genre, text, context, Gr. Artsruni, V. Khandamiryan, Mkrtich Khrimyan, O. Gruzenberg, Georgian poets, V. Brusov, Nimpha Gorodski.

¹ Բառախաղ է ռուսերեն բառի հայերեն թարգմանությամբ:

ВЛАДИМИР КИРАКОСЯН - ПОЭМЫ ПОСВЯЩЕНИЯ ТУМАНЯНА (обзор контекстной экспертизы) - В данной статье стихотворения-посвящения Туманяна рассматриваются в едином контексте его творчества. Эти произведения, наряду с некоторыми жанровыми особенностями классических стихотворений-посвящений, несут на себе печать времени и авторской личности.

Они написаны для определенных случаев или посвящены определенным людям. Но в каждом случае они имеют смысл в рамках творческого мышления поэта и философии художественной морали, способствуя правильной интерпретации некоторых сторон его эстетико-мировоззренческих предпочтений. Данная статья - первая попытка систематического анализа этой замечательной страницы лирики Туманяна.

Ключевые слова: жанр, текст, контекст, гр. Арцруни, В. Хандамирян, Мкртич Хримян, О. Грузенберг, Грузинские поэты, В. Брюсов, Нимфа Городски.